ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2021 թվականի N ____-Ա

ԳՈՒՅՔՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ավագանու 09.02.2021 թվականի N13 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աճեմյան 25 և Աճեմյան 2/1 հասցեներում գտնվող գույքը հանձնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի /այսուհետ՝ կոմիտե/ տնօրինությանը:

2. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 1-ին կետի աշխատանքների ավարտից հետո.

1) որպես առանձին գույքային միավոր առանձնացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աճեմյան 2/1 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող սույն որոշման N1 հավելվածով նշված թիվ 1 շինությունը

(կադաստրային ծածկագիր 08-001-0762-0097-001)՝ նույն հասցեում գտնվող այլ շինություններից:

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում առանձնացված գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-0762-0097-001) անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Շիրակի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

3) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո՝ երկամսյա ժամկետում «Շիրակի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակաեն իրականացման «Շիրակի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

3. Սահմանել, որ

1) սույն որոշման N2 հավելվածով նշված նվիրաբերված ընդհանուր շուրջ 2700 ք.մ. հողամասի վրա տեղակայված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աճեմյան 25 (կադաստրային ծածկագիր 08-001-762-003-001) և Աճեմյան 2/1 (08-001-0762-0097-002, 08-001-0762-0097-004, 08-001-0762-0097-005) հասցեներում գտնվող պետական սեփականություն հանդիսացող շինություններում և դրանց հարող տարածքում (այսուհետ՝ Անշարժ գույք) իրականացվելու են ըստ անհրաժեշտության ամրակցման, նորոգման, վերականգնման և բարեկարգման աշխատանքներ:

2) Հիմք ընդունելով, որ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված հասցեներում կադաստրային ծածկագրերով շինությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1270-Ն որոշմամբ ընդգրկված են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում (պետական ցուցիչներ՝ 7.1.4.62, 7.1.4.224, 7.1.4.225)՝ 3-րդ կետի 1-ին ենթակետում կատարվող աշխատանքները՝ իրականացվելու է «Պատմամշակութային և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան:

3) սույն որոշման 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

4. Սահմանել, որ

1) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված ամրակցման, նորոգման, վերականգնման և բարեկարգման աշխատանքներն իրականացնում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (համաձայնությամբ)՝ Համաշխարհային Բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» (ՀՄ 8390) ծրագրի միջոցներով՝ նախատեսվող աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Քաղաքաշինության կոմիտեի հետ::

2) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված ամրակցման, նորոգման, վերականգնման և բարեկարգման աշխատանքներն ավարտել 2022 թվականի սեպտեմբերի 30-ին:

5. Սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված անշարժ գույքը անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին՝ Գյումրու մասնաճյուղին տրամադրելու նպատակով:

6. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքները նախագծա-նախահաշվային փաստաթղթերին համապատասխան կատարվելու վերաբերյալ Քաղաքաշինության կոմիտեի կողմից եզրակացությունը ստանալուց հետո, անհրաժեշտության դեպքում չափագրել առկա Անշարժ գույքը և կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում, այն իրականացնելով Կոմիտեի միջոցների հաշվին.

2) սույն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝պայմանագիր)՝ դրանում սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին:

7. Սահմանել, որ՝ սույն որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետով «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին տրամադրվելիք սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված անհատույց օգտագործման անշարժ գույքի համար չեն կիրառվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6.2-րդ կետերով սահմանված պահանջները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված 1

ՀՀ կառավարության 2021 թվականի
____ __-ի N ___-__ որոշման

Ս Խ Ե Մ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՃԵՄՅԱՆ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա.ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
____ __-ի N ___-__ որոշման

Ս Խ Ե Մ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՃԵՄՅԱՆ 25, ԱՃԵՄՅԱՆ 2/1ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Գույքն առանձնացնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու, վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել էԳյումրու Աճեմյան 25 և Աճեմյան 2/1 պատմամշակութային շենքերի մի մասի վերանորոգման, հարակից հողամասի բարեկարգման և նշված տարածքում ՀԱՊՀ ԳՄ-ի ՏՏ ֆակուլտետի տեղակայման ապահովման, ինչպես նաև Գյումրու Աճեմյան 2/1 հասցեում գտնվող շենքի մյուս մասը «Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ին ամրացնելու նպատակով:

ՀՀ կառավարության 19.02.2009 թ. N 312-Ն որոշմամբ «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին է հանձնվել Պետական սեփականություն հանդիսացող Գյումրու քաղաքի Աճեմյան փողոցի 2, 2ա և Շչորսի 2 հասցեներում գտնվող շենքերը և շենքերի տակ գտնվող սպասարկման համար հողատարածքը:

Նշված որոշման 1-ին կետով հանձնարարվել է մշակույթի նախարարին Գյումրու քաղաքապետի հետ համատեղ ճշտել նշված հասցեներում գտնվող հողամասի սահմանները և սահմանված կարգով իրականացնել պետական գրանցում /01.12.2009թ. հ.2406065 վկայական/:

Գյումրու քաղաքի Շչորսի 2 և Աճեմյան փողոցի 2 հասցեներում ներփակված հողամասը քաղաքային համայնքի սեփականություն գրանցելու նպատակով Գյումրու քաղաքապետի 2009 թվականի հունիսի 29-ի հ.1267 որոշման համաձայն Գյումրու քաղաքի Շչորսի 2 և Աճեմյան փողոցի 2 հասցեները փոփոխվել են Գյումրու քաղաքի Աճեմյան 25 հասցեով:

Գյումրու քաղաքապետի 31.03.2009 թ. ն.8 որոշման համաձայն ՀՀ մշակույթի նախարարության հետ 2009 թվականի նոյեմբերի 6-ին կնքվել է նվիրաբերության պայմանագիր:

Հետագայում ՀՀ մշակույթի նախարարության համաձայնությամբ նշված հասցեներում գտնվող 08-001-0762-0097-001 կադաստրային ծածկագրով տարածքը տրամադրվել է ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող «Շիրակի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության:Նախկինում գրադարանը գործել է վարձակալական հիմունքներով զբաղեցրած այլ տարածքում:

Նախագծով նախատեսվում է համապատասխան վերանորոգման, բարեկարգման աշխատանքներն իրականացնելուց հետո Գյումրու Աճեմյան 25 (կադաստրային համար 08-001-762-003-001) և Աճեմյան 2/1 (08-001-0762-0097-002, 08-001-0762-0097-004, 08-001-0762-0097-005) հասցեներում գտնվող N 2 հավելվածով նշված ընդհանուր շուրջ 2700 ք.մ. հողամասի վրա տեղակայված գույքը «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման տրամադրելը:

ՀՀ կառավարության կողմից Բարձր տեխնոլոգիաների ոլորտը համարվում է գերակա և երկրի հզորագույն կապիտալի՝ մտքի վերարտադրման առաջնային հարթակ: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության շարժիչ ուժը մրցունակ կրթությունն է: Որակյալ և մրցունակ կադրերի պատրաստման, աշխատատեղերի ստեղծման, երիտասարդների զբաղվածության ապահովման, աշխատունակության բարձրացման ու արժեհամակարգիձևավորման գործընթացներում կարևորագույն դեր ունեն երկրում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Այս ոլորտում իր ուրույն դերակատարությունն ունի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, որն ունի նաև մասնաճյուղեր Գյումրիում, Վանաձորում և Կապանում: Փաստ է, որ որակյալ բարձրագույն կրթությունը դեռևս մեծ մարտահրավեր է ՀՀ մարզերում: ՀՀ մարզերում ոչ մրցունակ բարձրագույն կրթության պարագայում մեծանում է նաև արտագաղթի ռիսկը, քանի որ հետզհետե նվազում է երիտասարդների վստահությունը մարզային բուհերում որակյալ կրթություն ստանալու հանդեպ, ինչը հանգեցնում է նրանց տեղափոխմանը Երևան կամ արտերկիր:

ՀՀ Հյուսիսային երկու մարզերում՝ Շիրակում և Լոռիում, համապատասխանաբար՝ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների կառուցումն ու արդյունավետ

գործունեությունն ապացուցում են, որ հնարավոր է մայրաքաղաքից դեպի մարզեր ապակենտրոնացնել տեխնոլոգիական ոլորտի հնարավորությունները, դրանց շնորհիվ կանխել արտագաղթը, ստեղծել մրցունակ բիզնես միջավայր ոլորտի ընկերությունների համար, ինչպես նաև պետություն –մասնավոր հատված – կրթություն կապի շնորհիվ մոտիվացնել երիտասարդներին՝ ընտրելու այն մասնագիտությունները, որոնք պահանջված են հենց մարզում և ձևավորելով նոր բարձր վարձատրությամբ աշխատատեղեր: Տեխնոլոգիական ծրագրերի դեպի Գյումրի ուղղորդվելուն զուգահեռ, ոչ միայն արտագաղթելու պատրաստ բազում երիտասարդներ փոխեցին իրենց որոշումն, այլև տարիներ առաջ մարզից արտագաղթած տաղանդաշատ մասնագետները հետ վերադարձան և հիմնեցին իրենց սեփական ընկերությունները:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության առաջին օրվանից հաջողությունների կիզակետում այն երիտասարդներն են, ովքեր իրենց մտքի ճկունության, աշխատասիրության և գիտելիքների շնորհիվ դեպի մարզ են ներգրավում նոր ծրագրեր ու ներդրողներ: Տեխնոլոգիական ոլորտում հաջողություն գրանցած երիտասարդները հիմնականում, եթե ոչ բացառապես, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի շրջանավարտներն ու ուսանողներն են:

Սակայն տարիների ընթացքում մարզից դեպի մայրաքաղաք ձգտող ուսանողների քանակը մեծանում է, զուգահեռաբար՝ ռիսկի տակ դնելով Գյումրիում և, առհասարակ, մարզում գործող տեխնոլոգիական բիզնեսների ընդլայնման հնարավորությունները:

Վերը նշված հնարավորությունները մեծացնելու, ռիսկերը նվազեցնելու և երկրում համաչափ զարգացում ու մարզերի հանդեպ նոր վերաբերմունք ձևավորելու նպատակով այս ծրագրի ներքո համախմբվում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, Սինոփսիս ընկերությունը, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը, Համաշխարհային բանկը՝ ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի նոր և տարբերվող ձեռագիրը կերտելու համար:

Պետություն – մասնավոր հատված համագործակցության միջոցով Գյումրու պոլիտեխնիկի Տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետի վերածնունդն ունի առաքելություն՝ պիլոտային ծրագրի միջոցով մայրաքաղաքից դուրս առաջին անգամ դիրքավորել բարձրագույն ուսումնական հաստատություն, որը կլինի երկրում առաջատար՝ իր հնարավորություններով և կրթական նորարար ծրագրերով:

Սույն ծրագրի իրականացման արդյունքում՝ քաղաքի սրտում, կողք կողքի կգործեն Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը՝ որպես բիզնես միջավայր և հեռանկարային աշխատատեղերի, նոր ընկերությունների հավաքատեղի, Թումո կենտրոնը՝ որպես դպրոցականների համար հնարավորությունների հավաքատեղի և, ամենակարևորը, տնտեսության բարելավմանն ուղղված շղթան կհամալրվի բարձրագույն ուսումնական հաստատության ներկայությամբ, որտեղ նորարար կրթական ծրագրերը, արտադրությունից հրավիրված դասախոսները, արդիական փորձարարական լաբորատորիաները, գիտական ու հետազոտական ծրագրերը խթանող գործառույթներն ու ուսանող – գործնական միջավայր անմիջական կապը կստեղծեն նոր վերաբերմունք ՀՀ երկրորդ քաղաքի հանդեպ, իսկ տեղի երիտասարդությունն այլևս հպարտությամբ իրեն կկոչի «Գյումրու պոլիտեխնիկի ուսանող»:

«Գույքն առանձնացնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու, վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունելու դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԳՈՒՅՔՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. ՀՀՖինանսներինախարարություն	**16.04.2021 թ.** **01/8-2/5710-2021**
Առաջարկություններ չունի	
2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	**19. 04.2021 թ.** **N ՍՊ/21.1/9505-2021**
ՀՀտարածքայինկառավարմանևենթակառուցվածքների նախարարությունը«Գույքն առանձնացնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու, վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակը (այսուհետ՝Նախագիծ) քննարկելէՊետականգույքիկառավարմանկոմիտեիհետ: ՁեզենքուղարկումՆախագծիվերաբերյալվերջինիսներկայացրածդիրքորոշումը: Առդիր՝ էլեկտրոնային նյութ:	
Պետական գույքի կառավարման կոմիտե	
1. Նախագծի 2-րդկետի 1-ինենթակետիցհանել«երկամսյաժամկետում»բառերը,	Ընդունվել է 1. Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետիցառաջարկի ն համապատասխան

	հանվել է «երկամսյա ժամկետում» բառերը:
2. Նախագծի 4-րդ կետի 1-ին ենթակետում «միջոցներով» բառից հետո լրացնել «՝նախատեսվող աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Քաղաքաշինության կոմիտեի հետ:» բառերը,	Ընդունվել է 2.Որոշման նախագծի 4-րդ կետի 1-ին ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:
3. Նախագծի 8-րդ կետի 1-ին ենթակետում «աշխատանքների ավարտից հետո ընդունել աշխատանքների արդյունքը» բառերը փոխարինել «աշխատանքները նախագծա-նախահաշվային փաստաթղթերին համապատասխան կատարվելու վերաբերյալ Քաղաքաշինության կոմիտեի կողմից եզրակացությունը ստանալուց հետո» բառերով:	Ընդունվել է 3.Որոշման նախագծի 8-րդ կետի 1-ին ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:
3. Անշարժ գույքի կադաստրի կոմիտե	**14. 04.2020 թ** **ՆՍԹ/2426-2021**
Դիտողություններ և 12առաջարկություններ չունի	
4. Արդարադատության նախարարություն	**30.04.2021** **N 01/27.1/11020-2021**
Ի պատասխան Ձեր 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 01/20.1/7868-2021 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 252-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 15-րդ կետում ամրագրված կարգավորման համաձայն՝ Նախագծերը նախապես կարծիքի են ուղարկվում ***շահագրգիռ մարմիններին*** նախագիծը ներկայացնողի կողմից: *Ոչ նորմատիվ բնույթի նախագծերը կարծիքի են ուղարկվում նաև* ***արդարադատության նախարարություն****, բացառությամբ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին, աշխատանքային խմբերի (հանձնաժողովների, հանձնախմբերի) մասին,* ***գույք հետ վերցնելու կամ ամրացնելու մասին նախագծերի:***	

«Գույքն առանձնացնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու, վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) առումով անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներկայացված Նախագիծը վերաբերում է գույքն առանձնացնելուն և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելուն, ինչպես նաև վերանորոգմանը, բարեկարգման աշխատանքներ իրականացնելուն և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելուն, իսկ ՀՀ արդարադատության նախարարությունն էլ, ըստ էության, տվյալ նախագծով շահագրգիռ մարմին չի հանդիսանում՝ ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 252-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 15-րդ կետի պահանջներով՝ հարկ ենք համարում նշել, որ ներկայացված Նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից կարծիք չի ներկայացվելու:	
5. ՀՀ վարչապետի աշխատակազմ	**18.03.2021 թ.** **N02/16.4/8543-2021**
Վարչապետի հանձնարարությամբ՝ խնդրում եմ ևս մեկ անգամ համաձայնեցնել շահագրգիռ մարմինների(այդ թվում՝ կազմակերպությունների) հետ, ինչպես նաև հստակեցնել նախագծի 3-րդ կետով նախատեսված վերանորոգման, բարեկարգման աշխատանքների իրականացման ժամկետները:	Ընդունվել է Որոշման նախագիծը ներկայացվել է շահագրգիռ գերատեսչական մարմինների քննարկման: Որոշման նախագծի 4-րդ կետը լրամշակվել է և նշվել է 3-րդ կետում կատարվող վերանորոգման, բարեկարգման աշխատանքների իրականացման ժամկետը:

ՀՀ վարչապետի աշխատակազմ	06.05.2021թ. 02/16.4/15814-2021
Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչություն	
1. Նախագծի 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար» բառերից հետո լրացնել «պաշտոնակատար» բառը:	Ընդունվել 1. Նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում
2. Հաշվի առնելով, որ Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետի շրջանակներում նախատեսվում է իրականացնել անշարժ գույքի առանձնացման, դրա անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Շիրակի մարզային գրադարանին» ամրացման գործընթացներ, կարծում ենք, որ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի Նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նշված աշխատանքների ավարտից հետո պայմանագրի կնքման համար նախատեսվող քառամսյա ժամկետը: Նույն նկատառումը վերաբերվում է նաև Նախագծի 8-րդ կետի 2-րդ ենթակետում նշված եռամսյա ժամկետին: Միաժամանակ, առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աճեմյան 2/1 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող շինության (N1 հավելվածում նշված թիվ 1 շինություն (կադաստրային ծածկագիր 08-001-0762-0097-001) որպես առանձին գույքային միավոր առանձնացման դեպքում՝ դրանով ծանրաբեռնված հողամասի ճակատագիրը:	Ընդունվել է 3. Նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետում և 6-րդ /նախկինում 8-րդ/կետի 2-րդ ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:
4. Նախագծի 3-րդ կետում «կադաստրային համար» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կադաստրային ծածկագիր» բառերով:	Ընդունվել է Նախագծի 3-րդ կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:
5. Հաշվի առնելով Նախագծի 5-րդ կետը՝ անհրաժեշտ է հստակեցնել՝ արդյո՞ք ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի	Ընդումվել է

Աճեմյան 25 և Աճեմյան 2/1 հասցեներում գտնվող շինությունները հանդիսանում են պատմամշակութային հուշարձաններ: Եթե այո, ապա անհրաժեշտ է առաջնորդվել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի դրույթներով:	Նախագծի 3-րդ և 5-րդ կետերը առաջարկին համապատասխան լրամշակվել են:
6. Նախագծի հավելվածները կազմելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 252-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 78-րդ կետով սահմանված պահանջներով:	Ընդունվել է Նախագծի հավելվածները կազմվել են առաջարկին համապատասխան:
Իրավաբանական վարչություն	
Նախագծի 3-րդ կետով նախատեսվում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աճեմյան 25 և Աճեմյան 2/1 հասցեներում գտնվող շինություններում և դրանց հարակից տարածքներում իրականացնել վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, մինչդեռ, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հուշարձանի փոփոխումը կատարվում է բացառիկ՝ նրա սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ օգտագործելու անհնարինության և (կամ) շահագործման նորմատիվային պահանջներին համապատասխանեցնելու դեպքերում և միայն լիազորված մարմնի դրական եզրակացության հիման վրա, որը նախագծին կից ներկայացված փաթեթում առկա չէ: Բացի այդ՝ նախագծի 3-րդ կետով նախատեսվում է, որ վերոնշված հասցեներում գտնվող շինություններում և դրանց հարակից տարածքներում՝ ըստ անհրաժեշտության, իրականացվելու են քանդման աշխատանքներ: Հարկ է նշել, որ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» 21-րդ հոդվածի համաձայն՝ հուշարձանի քանդումն արգելվում է:	Ընդունվել է մասնակի Հիմք ընդունելով «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ Նախագծի 3-րդ կետը լրամշակվել է: Ինչ վերաբերում է նախագծին կից կատարվող աշխատանքների վերաբերյալ նախարարության եզրակացությանը՝ այն ներկայումս ներկայացնել չենք կարող, քանի որ նախագծանախահաշվայ ին փաստաթղթերը դեռ չեն պատվիրվել: Եզրակացություն կարող է տրամադրվել միայն սույն որոշման նախագծի ընդունումից հետո համապատասխան ուսումնասիրությունների

	արդյունքում սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթեր պատրաստելուց հետո:
Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտե	22.06.2021թ. նիստ
Հանձնարարվել է քննարկել նախագծի վերաբերյալ Վարչապետի աշխատակազմի կողմից հայտնած դիտարկումները	Նախագիծը լրամշակվել է